ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

<<06>> փետրվարի 2015 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ **Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝ **Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ **Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝**

Ա. Ադամյան Գ. Ադամյան Ա. Բաղեյան Ա. Բաղրամյան Ա.Գրիգորյան Լ. Բարսեղյան Վ.Եդիգարյան Գ.Թաթարյան Հ. Խաչատրյան Տ.Հովհաննիսյան Վ. Հունանյան Ռ.Մխիթարյան Է. Մկրտչյան Վ.Շիրինյան Ե.Պողոսյան Մ. Սահակյան Տ. Փանոսյան

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Ռ.Սանոյանը և Վ. Մխիթարյանը, համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Ա.Բալաբեկյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսեսյանը, Հ. Սարգսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Ա.Հակոբյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետ Ս.Ղազարյանը, կրթության բաժնի պետ Հ.Սուլթանյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետ Ա.Դավթյանը, վերահսկողության բաժնի պետ Ա.Համբարձումյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանը, գովազդի բաժնի պետ Հ.Թադևոսյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետի ժ/պ Ա.Գրիգորյանը, քարտուղարության բաժնի պետ Ն.Բարսեղյանը, ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ Ա. Հովհաննիսյանը, տրանսպորտի բաժնի պետ Ա. Եղոյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝

ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

ԼՍԵՑԻՆ.

1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՑ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

Համայնքի ղեկավար Ս.Բալասանյանը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը:

Ավագանու անդամ Լևոն Բարսեղյանը առաջարկեց օրակարգ ընդգրկել իր ներկայացրած ուղերձի նախագիծը: Առաջարկը դրվեց քվեարկության, որի արդյունքում՝ (1) կողմ, (16) դեմ, (0) ձեռնպահ, օրակարգ ընդգրկելու վերաբերյալ առաջարկը մերժվեց: Որից հետո Լ. Բարսեղյանը հեռացավ ավագանու նիստից: Նիստը շարունակվեց ավագանու թվով 16 անդամների մասնակցությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 06-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի Համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին>> 205-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը 147.743.100 (մեկ հարյուր քառասուն յոթ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝ վարչական մաս՝ 107.687.800 (մեկ հարյուր յոթ միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ֆոնդային մաս՝ 40.055.300 (քառասուն միլիոն հիսունհինգ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղել 2014 թվականի ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերին՝ առկա պարտավորությունների կատարմանը: Վարչական մասի 107.687.800 (մեկ հարյուր յոթ միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ մնացորդից 16.761.500 (տասնվեց միլիոն յոթ հարյուր վաթսունմեկ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը թողնել վարչական մաս, 14.042.100 (տասնչորս միլիոն քառասուներկու հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը որպես սուբվենցիայի մնացորդ վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 116.939.500 (մեկ հարյուր տասնվեց միլիոն ինը հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել ֆոնդային մաս,

2)հաստատել՝

ա. եկամուտները՝ 3.144.933.500 (երեք միլիարդ մեկ հարյուր քառասունչորս միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. ծախսեր՝ 3.292.676.600 (երեք միլիարդ երկու հարյուր իննսունինը երկու միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հաստատել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեն եռամսյակային բաշխումներով՝ համաձայն հավելվածներ NN 1-5-ի:

3. Գյումրի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստաֆոնդի առաջին եռամսյակի նախատեսված 41.984.900 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել ֆոնդային մաս:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ԳՅՈՒՄՐԻՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՀԵՏԱԳԱ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրիում 2015 թվականի հունվարի 12-ին կատարված ողբերգության հետևանքով Ավետիսյանների ընտանիքի մահացած անդամների հուղարկավորության, հետագա արարողությունների կազմակերպման, գերեզմանի շինարարական աշխատանքների կատարման համար Գյումրու համայնքային ենթակայության <<Հավերժ Հիշատակ>> փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել 11.000.000 (տասնմեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/3/1 գործառական դասակարգման <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> (4239) տնտեսագիտական դասակարգման հոդվածից:
3. Հանձնարարել <<Հավերժ Հիշատակ>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ Գյումրի համայնքի ավագանուն ներկայացնել համապատասխան հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ -2 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ <<ՄՈՒՇ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել <<Մուշ Զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպությանը 492.300 (չորս հարյուր իննսուներկու հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Մուշ-2 թաղամասում գործող մանկական կենտրոնի ծախսերը մասնակի փոխհատուցելու համար:
2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել 9/6/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող

կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 191 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆՄԵԿ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 191 (մեկ հարյուր իննսունմեկ) անձանց կանխիկ տրամադրել 2.040.000 (երկու միլիոն քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԱԶԱՏ ՇԻՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 6 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՏԵՂՆԱՇԱՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ <<Ազատ Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռից դուրս գրել թվով 11 (տասնմեկ) ստեղնաշար գործիքներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹՎՈՎ ՄԵԿ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՆՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻՑ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել իրականացնելու տրանսպորտային միջոցի՝ թվով մեկ մարդատար ավտոմեքենայի գնումը բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
2. Թույլատրել գնումն իրականացնել երկրորդային շուկայից:
3. Այդ նպատակով հատկացնել 3.500.000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 3-րդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (5121) «Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել 3.000.000 (երեք միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ կանանց միջազգային օրվա կապակցությամբ Գյումրիում համաքաղաքային միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլատրել անհրաժեշտ գնումները իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) <<Այլ ծախսեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի կրթության բաժնի պետ Հ.Սուլթանյանին:

Հ.Սուլթանյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վարձավճարների 2015 թվականի ամսական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ 252 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՄՍՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ S 500 ՄԱԿՆԻՇԻ, 35 DV 555 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 706.123 (ՅՈԹ ՀԱՐՅՈՒՐ ՎԵՑ ՀԱԶԱՐ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԵՐԵՔ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝Ս. ՄԻՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանին:

Ս.Մինասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել արտոնություն Հարություն Սամսոնի Խաչատրյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող MERCEDES–BENZ S 500 մակնիշի, 35 DV 555 պետհամարանիշի մեքենայի գույքահարկի 706.123 (յոթ հարյուր վեց հազար հարյուր քսաներեք) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարման նկատմամբ՝ ազատելով 706.123 (յոթ հարյուր վեց հազար հարյուր քսաներեք) Հայաստանի հանրապետության դրամ գումարի վճարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Եղիշե Պողոսյան)
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ՄՈՒՇ-2>> ԹԱՂԱՄԱՍ 7-ՐԴ ՓՈՂՈՑ N 4/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով, Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող <<Մուշ-2>> թաղամաս 7-րդ փողոց N 4/2 հասցեի 08-001-0083-0105 կադաստրային ծածկագրով 35,0 (երեսունհինգ) քառակուսի մետր մակերեսով առանձնացված ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը մրցույթով 50 (հիսուն) տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրելու առաջարկին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 35.000 (երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ N 33 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Փոփոխել քաղաքացիներ Միեր Աթարբեկի և Մուրադ Դավիթբեկի Զարգարյաններին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2803609) Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 3-րդ թաղամաս N 33 հասցեի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) հեկտար մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրության հողերի արդյունաբերական օբյեկտների հողը փոխադրել բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողի կատեգորիա:
2. Սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման մասին 10 (տաս)-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 29/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց N 29/10 հասցեում ինքնակամ կառուցված 5,07 (հինգ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճանները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 5,07 (հինգ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 20 (քսան) տարի ժամկետով՝ վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած քաղաքացի Սիրանուշ Բագրատի Մուրադյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված աստիճանների և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 35.000 (երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 156-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Աճուրդով օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերի աճուրդի մեկնարկային գներ և պայմաններ հաստատելու մասին» N 156-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) 1-ին տողի 6-րդ սյունակում «1 110 000» թիվը փոխարինել «870 000» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ

ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն աճուրդային կարգով օտարելուն և հաստատել հողամասերի օտարման աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ N 108/3 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գորկու փողոց N 108/3 հասցեի 157,7 (մեկ հարյուր հիսունյոթ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 216,5 (երկու հարյուր տասնվեց ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի հունվարի 22-ի թիվ-004 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 157,7 (մեկ հարյուր հիսունյոթ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով շինության և 216,5 (երկու հարյուր տասնվեց ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել
2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0

ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՑԻԿ ՃԱՆԱՊԱՐՀ N 45/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Արևելյան շրջանցիկ ճանապարհ N 45/1 հասցեի 730,8 (յոթ հարյուր երեսուն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 465,0 (չորս հարյուր վաթսունհինգ) քառակուսի մետր մակերեսով հողամասը օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի հունվարի 22-ի թիվ-005 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 730,8 (յոթ հարյուր երեսուն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով շինության և 465,0 (չորս հարյուր վաթսունհինգ) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել 5.300.000 (հինգ միլիոն երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի

համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 170-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց